1183
hwykpkG

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

1483-ԼԿ
L-68

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ

ԱՆԴՐԻԽՏՈՅ

Ի ՊԷՏՍ

ԸՇԱԿԵՐՏԱՑ

ՍՈՒՐԲ ԱՆԴՐՈՒԽՏ ԴՊՐՈՅԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՊԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ԿԱԼԿԱԹԱ

1847

1183
9239-57
114
digitised by A.R.A.R.@

2353

2004

Ցահեկէն կուսէ ընդ ոլորան ի վայր
Բուրգն անդամանդէ համակ լուսափայլ,
Ուր Սանդուխտ ի փշոց կոկան նորաբաց՝
Զիւր նախկին փայլուն յԱրև ծաւալեաց։

Կուսածին Գառին կոյս երկայրիկ
Կուսական արեամբ երինհար ծաղիկ,
Ուր զԱղգին վառեաց զոգի աղօթիկը,
Խօսնակ ի դովեստ խաչին գեղգեղել։

Թոնգ • Թոռչիգեանց։

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅ ԿՈՅՍ

ԵՒ

ԴՊՐՈՑ

Հ. ԴՈ՛ՅՐ. ո՞ւր աշակերտիս գրոց։

Գ. Ի՞նչ Սուրբ Անդուխտ Դպրոցի։

Հ. Ո՞վ էր Սուրբ Անդուխտ։

Գ. Դուստր Սանատրկոյ, որ էր Դեռ-
ռորդի Աբգարու Թագաւորին մե-
ռոյ. և հաւատացեալ քարոզու-
թեան Առաքելոյն Թադէոսի՝ մը-
կրտեցաւ հանդերձ ամենայն տամբն։

Հ. Ո՞ր Սուրբ Անդուխտն յայն-
ժամ քանի՞ տարեկան կոյս էր։

Գ. Երկոտասան կամ հնգետասան։

Հ. Ապա զի՞նչ հաւատաց ի Քրիս-
տոս։

Գ. Եսեռս զի Առաքեալն Թադէոս
անուամբն Քրիստոսի զբորոտս սրբ-
բէր, զկաղս գնացուցանէր, և զդեռ

digitised by A.R.A.R.@

հանէր։ ուստի գնաց 'ի գիշերի։
և ախորժ կամօք լսէր զբան քա-
րոզութեան Սուրբ Աւետարանին։
Հ. Օ՞ինչ քարոզութիւն Աւետարա-
նին։
Պ. Որպէս լերուք և ձեր աչքն լոյս։
զի Աստուած այնքան սիրեաց զաշ-
խարհ՝ մինչ զՈրդին իւր միածին
եւտ։ զի փրկեսցի աշխարհ նովաւ։
Հ. Ուրեմն առանց Որդւոյն Աստուծոյ
մեզ փրկութիւն չկայ։
Պ. Եթէ կայր։ նա ոչ զայր և մարգա-
նայր վասն մեր։
Հ. Աստ թէ նշանք տեսանելով մի-
այն հաւատաց նա։
Պ. Այ. միայն նշանքն քաւական չեն.
պիտի երկնաւոր Հօր Աստուծոյ
շնորհքն ձգէ զմեզ առ Քրիստոս։
Հ. Օ՞ինչ կոչէր սա զԹադէոս Ա-
ռաքեալ։
Պ. Լուր հոգւոյ Հայր։ որ ապա եղև
բոլոր Հայաստանեայց Հայր հո-
գևոր։

digitised by A.R.A.R.@

Հ. Մեզ ևս Հոգւոյ Հայր չէ Աստուածն։

Գ. Հարկիւ որ։ զի եթէ մեք ևս ի մատաղ հասակի մերում ունկնդիր լիցուք Աւետարանին՝ Սուրբ կոյս Անդխատոյ նման, ոչ միայն առաքեալն Աստուծոյ, այլ և Աստուած ինքնին լինի մեզ Հայր, և տայ ևս մեզ զՀոգին Շնորհաց իւրոց։

Հ. Երբ Սուրբ Անդուխտ միրտեցաւ թնչ մեծ նշան եղև անդ։

Գ. Նշան լուսեղէն եղև ի վերայ կուսին, և ի միջոյ լուսոյն լսելի լինէր ձայն յերկնից՝ որ ասէր, "Օ ուսրշացիր դուստր սուրբ և Հարան անարատ երկնաւոր փեսային Քրիստոսի։"

Հ. Եթէ Անդուխտ սիրէր զԱստուած իւր, և Աստուած զԱնդուխտ մեր, ուրեմն թնչ պէտք նշանին լուսոյ։

Գ. Օ ի բազումք տեսեալ հաւա-

digitised by A.R.A.R.@

տայցեն ի Քրիստոս, որպէս և
եղէն իսկ՝ և հաւատացին։
Հ. Օ՞ինչ ապա զհետ եկն այսմ։
Գ. Ի ըդուլեցան քնակիչք Շաւարշան
Հոլանոց քաղաքի Հայոց, և բուղ-
քեցին առ Անանտրուկ Հայր նորա։
Հ. Օ՞ինչ արար Անանտրուկ։
Գ. Աշխարհասէր մարդն Աստուածա-
սէր ոչ կարէ լինել։ Սա Թէպետ
յահէ իւր քեռի Աբգար նախահա-
ւատ թագաւորին մերոյ՝ հաւատա-
ցեալ էր ՝ի Քրիստոս, սակայն՝
որովհետև ի մահ եղեալ էր յափշ-
տակել զթագաւորութիւն աշխարհին
Հայոց։ և զայն առնել ոչ յաջողէր
նմա, ըստ թիւր կարծեաց իւրոց՝
հաւատովն Քրիստոսի։ զի ոչ հա-
ճէին ընդ այն կռապաշտ իշխանք
իւր՝ վանորոյ ուրացաւ, և ըզ
դուստր իւր յորդորէր ուրանալ
զՔրիստոս։
Հ. Ընանց նմա առ ըզն Անդուխտ։
Գ. Ամենայն զաւակ պիտի հնազանդ

digitised by A.R.A.R.@

լինի Ծնողաց իւրոց։ բայց ոչ թէ աւելի քան թէ Աստուծոյ։

Հ. Զ՞ինչ արար Սանատրուկ երբ ոչ անսաց նմա դուստրն։

Գ. Դպահ հայրախնամ գթով յորդորեաց զնա։ բայց յորժամ պինդ եգիտ զնա ի հաւատն՝ Հրամայեաց յանդիման աչաց նորա զբաղումս ի հաւատացելոցն պէսպէս տանջանօք սպանանել, զի երկիցէ կոյսն սուրբ։ այլ նա ոչ երկեաւ։

Հ. Ապա ընդէր հրամայեաց հայրն շրջել թայիւք կապել զնա և ի բանդ արկանել։

Գ. Վասնզի եկն նա գիշերի։ և մաքուր կոտաւօք պատեալ զմարմնոյ սրբոյ նահատակացն՝ թաղեաց զնոսա պատուով։

Հ. Երբ սուրբն այսպէս բանդարկեցաւ, զի՞նչ արար Աղաքեան Թագէոս։

Գ. Ինքնակամ գնաց ի բանդ անդր։ քարոզէաց նմա և ընկերացն՝ հ...

digitised by A.R.A.R.@

տատուն կալ ի հաւատս Քրիս-
տոսի . և աղօթեաց վասն նոցա ։

Հ. Օ՛ինչ եղև զնի աղօթիցն ։

Գ. Զայն յերկնից , թէ՝ "Դու Սան-
դուխտ , որ արհամարհեցեր զերկ-
րաւորս պատիւս՝ և եկիր զնի իմ ,
տաց քեզ զվերագոյն լոյսն ։"

Հ. Բանդուպեան և պահապանք զայս
լուեալ՝ զինչ արարին ։

Գ. Հաւատացին ի Քրիստոս և մկր-
տեցան յանուն Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ ։

Հ. Օ՛ինչ արար Աբքայ ։

Գ. Ընդ լուսանալ առաւօտուն ա-
ռաքեաց զՀրամանատար ամենայն
Աբքուրնի տանն՝ հանել զՍան-
դուխտ և զԱռաքեալն Թադէոս , և քերել ի դատաստան ։

Հ. Աբքայն նա զկամն Թադաւորին ։

Գ. Ո՛չ բնաւ . զի յահ ։ երկնաւոր լու-
սոյն մոլեգնեալ Թաւալէին , և քը-
ժշկեալ ի ձեռն Աբքայոյն՝ հա-
ւատացին ի Քրիստոս ։

digitised by A.R.A.R.@

Հ. Օ՞ն՝ չ արար Աբքայ։

Գ. Հրամայեաց վերստին կոտորել սրով զհաւատացեալսն, բայց Սուրբն Սանդուխտ բերեալ մաքուր կըտաւս ի ձեռն հաւատարիմ պաշտօնէից իւրոց՝ պատեաց և ամփոփեաց զնշխարս Նոցա։

Հ. Օ՞ն՝ ապա ի վաղուէ առաւօտուն։

Գ. Ուռաքեաց արքայ և բերին յապարանսն իւր զՍուրբ Ուռաքեան կապեալ, իսկ զՍանդուխտ արձակեալ զոր երբև եառեալ "մատ ՀԿառիս՝ասէ, դուստր իմ, և հօրս որդի՝ Սանդուխտ. զի համբուրեցից ըզքեզ։ Օ՞ իս ուրացար որդեակ, ըզհայր քո, և սիրեցեր զմոլորեցուցիչն զայն։

Հ. Յանդգնեցն պատասխանեաց Սանդուխտ։

Գ. Ո՛չ—այլ հեզութեամբ մեծաւ. զի դստերաց յանդգնութիւն վայել չէ. և ասաց. "Օ որ դու մոլորե-

digitised by A.R.A.R.@

ցուցիչ կոչես Հայր, նա եղև ինձ առաջնորդ ճանապարհին ճշմարտութեան։

Հ. Զի՞նչ արար Աբրահամ։

Պ. Հրամայեաց երկաթի քերանոք քերել զմարմին նորա և այրել ըստ եղկին։

Հ. Աստուած զի՞նչ արար։

Պ. Պոլեգնութեամբ էհար զարքայ և զիշխանս նորա, մինչև անկան յոտս Առաքելոյն զի աղօթեսցէ, և իբրև դադարեցաւ պատիժ պատուհասին, նոքա փոխանակ Աստուծոյ՝ Աբրամազդայ և Անահտայ կռոց մատուցին փառս։

Հ. Սուրբ Սանդուխտ չէր որ քարոզեաց Զարմանդուխտ Տիկնոջն, և յաւել ի հաւատս Քրիստոսի։

Պ. Այո՛, և այնքան ճգնէր Առաքելուհին Քրիստոսի վասն հաւատոց Տեառն իւրոյ, մինչ Սանատրուկ ասաց, թէ նա առաւել քան զամենեսեան մոլորեցուցանէ։

digitised by A.R.A.R.@

Ուստի և Հրամայեաց սրով սպա-
նանել զնա։ Եւ այսպէս բարի
խոստովանութեամբ ի Քրիստոս՝
կատարեցաւ պանծալի վկայութիւն
սուրբ Անդուխտ, որ և Աստա-
քելութիւն, և Կուսամայրաշխարհի,
յամի Տեառն իբրև 48։

Հ. Ուրեմն թուի թէ առաջին կոյս
նահատակ Քրիստոսի՝ մեր այս
Սուրբ Անդուխտ է։

Պ. Այո՛, զի որպէս Աբգար անդրանիկ
հաւատացեալ թագաւոր, նոյն-
պէս սա՝ նորա քեռ թոռնն, անդ-
րանիկ նահատակ հաւատոց եղև,
որ Նոյայ մարգարէութիւնն կա-
տարի։

Հ. Ի՞նչ էր Նոյայ մարգարէութիւնն
մեր Ազգի համար։

Պ. Ընդարձակեսցէ Տէր Յաբեթի, և
բնակեսցի ի տան Սեմայ։

Հ. Յաբեթ ո՞վ էր։

Պ. Նոյայ մեծ որդին, մեր ազգն 'ի
նմանէ ծագեցաւ։

digitised by A.R.A.R.@

Հ. Ով էր Սեմ։

Գ. Նոյայ միջակ որդին. Հրէից աղգն ի նմանէ ծագեցաւ. և մեր Տէրն ի Հրէայ Կուսէն փրկիչ ծնաւ մեզ։

Հ. Նէրկայ ընդէր մեր Դպրոցն նորա անուամբ հաստատի։

Գ. Զ՝ասն այն՝ որ մեք ջանասցուք յամենայնի Սուրբ Անդուխտ կուսի նման Քրիստոսասէր լինել, այսինքն Աստուածասէր և մարդասէր, որ փրկութեան հասանեմք։

Հ. Եթէ այդ հիման վերայ է շինութիւնն, ուրեմն Բարերարն Աստուած միշտ հաստատ պահէ։

Գ. Ամէն։

---

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@